

Ռուսլան Ա. Ցականյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՍՈՐԵՍՏԱՆՈՒՄ

Թիգլաթպալասար III-ի (մ.թ.ա. 745-727թթ.) օրոք*

Բանալի բառեր – Ասորեստան, Թիգլաթպալասար III, գանգվածային տեղահանություն, վերաբնակեցում, ներքին քաղաքականություն, Միջագետք, Բաբելոն, Ուրարտու:

Մուտք

Ասորեստանի պետական կառուցակարգում առանցքային նշանակություն ունեցող երևույթներից էր գանգվածային տեղահանությունների ու վերաբնակեցումների քաղաքականությունը (**nas/šāhu**)¹, որը դարձել էր Ասորեստանի արտաքին ու ներքին քաղաքականության բնորոշ առանձնահատկությունը:

Աստուրական ռազմական բնույթի տարեգրությունների համատեքստում դժվար չէ նկատել, որ ռազմարշավներն ու տեղահանությունները Ասորեստանի պետական քաղաքականության անքակտելի մաս են դարձել Թուկուլտի-ապիլ-Էշարրա (Թիգլաթպալասար) III-ի (մ.թ.ա. 745-727 թթ.) կառավարման ժամանակներից սկսած² և շարունակվել են մինչև Մին-ախիսե-Էրիբ (Մինախիսերիբ) թագավորի (մ.թ.ա. 705-681 թթ.) կառավարման շրջանը: Հետագայում Աշշուր-ալիսա-իդդինայի (Ասարխադդոն) (մ.թ.ա. 681-669 թթ.) և Աշշուր-բանի-ապլի (Աշշուրբանիպալ) (մ.թ.ա. 669-627 թթ.) կառավարման ժամանակաշրջաններում, նման միտումը սկսել է թուլանալ, ապա և

*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.08.2018:
1 Տես **Ցականյան Ռ.**, Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. VII-VI դդ., Եր., 2018, էջ 18-26; **Նույնի**¹ Ջանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը Ասորեստանում և Վանի թագավորությունում (Ք.ա. VIII-VII դդ.), ՄՄԱԵԺ, XXIX, 2014, էջ 49, N 53:
2 Տես **Oded B.**, op. cit., pp. 2, 19; **Gallagher R. W.**, Assyrian Deportation Propaganda, State Archives Assyria Bulletin, VIII/2, 1994, pp. 57-65; **Ցականյան Ռ.**, Էթնոքաղաքական տեղաշարժերը ..., էջ 18; **Նույնի**² Ջանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը ..., էջ 48:

պետությանը համակած արտաքին քաղաքական ճգնաժամի պատճառով դադարել է: Մասնագիտական գրականության մեջ հաճախ նման քաղաքականության կիրառումը փորձում են տեսնել այլ պետություններում և ավելի վաղ ժամանակաշրջաններում: Այսպես, Բ. Օդետը նշում է, որ զանգվածային տեղահանությունների քաղաքականությունը կիրառվել է Ասորեստանում մինչ Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ի գահակալությունը, ավելացնելով, որ բնակչության լայնամասշտաբ տեղահանությունները հայտնի էին դեռևս Եգիպտոսում, Խեթական տերությունում³ և Միջագետքում, սակայն միայն Նորաստուրական ժամանակաշրջանում այն վերածվեց սովորական երևույթի: Դա օտար ժողովուրդներին իշխելու միջոց էր՝ հեռու գնացող քաղաքական, ժողովրդագրական ու մշակութային հետևանքներով⁴: Իսկ ահա Ա. Կ. Գրեյսոնը գտնում է, որ այն սկսվել է կիրառվել Ասորեստանում՝ սկսած Աշշուր-Նաժիր-ապիլ II-ի (մ.թ.ա. 884–859 թթ.) կառավարման ժամանակաշրջանից⁵:

Մեր նախկին աշխատանքներից մեկում նշել ենք, որ պետական մակարդակով նման քաղաքականության զանգվածային կիրառումը սկիզբ է առել Բիայնիլի-Ուրարտուում⁶: Իսկ ահա Ասորեստանում այն կիրառվել է Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ի օրոք երկրում կատարված ռազմաքաղաքական բարեփոխումների արդյունքում, ուստի չենք բացառել նման քաղաքականության հնարավոր փոխառումը Ուրարտուից: Պետք է նշել նաև, որ մինչ Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ի կառավարումը այս քաղաքականությունը մուտք չի գործել պետական քաղաքականության օրակարգ, իսկ ռազմագերիներ վերցնելն ու նրանց Ասորեստան կամ որևէ այլ երկրի տարածք տեղափոխումը չի կարելի դիտարկել որպես զանգվածային տեղահանություն⁷:

1. Զանգվածային տեղահանությունների քաղաքականության մեթոդներն ու բնույթը

Մ.թ.ա. 745-ին Ասորեստանում պալատական հեղաշրջման արդյունքում և ըստ երևույթին, աստուրական բանակի գլխավոր հրամանատար (turtānu) Շամշի-իլուի (Šamši-ilu)⁸ ապստամբության հետևանքով իշխանությունը անցավ Հին Արևելքի պատմության կարկառուն դեմքերից մեկին՝ Թուկուլտի-ապիլ-Էշարրա (ṾTukultī-apil-Ešarra⁹) III-ին (մ.թ.ա. 745–727 թթ.): Նա գահ

3 Վերջերս հրատարակած իր աշխատություններից մեկում Բ. Ղազարյանն անդրադառնալով Խաթթիում Մուրսիլի II-ի կողմից կատարված տեղահանությունների պատճառներին՝ իրավացիորեն նշում է, որ արքայի համար անհրաժեշտ էր բնակեցնել համաձարակի պատճառով բնակչության մեծ կորուստ կրած տարածքները: Տե՛ս **Ղազարյան Բ.**, Խաթթիի Մեծ արքա Մուրսիլի II-ը և նրա ժամանակաշրջանը, ՄՄԱԵԺ, XXIX, 2014, էջ 34–35:

4 Տե՛ս **Oded B.**, op. cit., p. 2.

5 Տե՛ս **Grayson A.K.**, Assyria: Ashur-Dan II to Ashur-Nirari V (934–745 B.C.), The Cambridge Ancient History, III/1, 1982, pp. 253–259.

6 Տե՛ս **Ցականյան Բ.**, Զանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը ..., էջ 48:

7 Տե՛ս **Tsakanyan R.**, Tiglath-Pileser III (745–727 B.C.): Mass deportations and resettlements policy in Assyria, «Բանբեր Հայագիտության», 2018, N 1 (16), էջ 116–120; **Կույնի՝** Միջինասորեստանյան տերության արտաքին և ներքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ, ՄՄԱԵԺ, XXXI, 2018, էջ 29–32:

8 Տե՛ս **Grayson A. K.**, op. cit., p. 278. **Mattila R.**, The King's Magnates. A Study of the Highest Officials of the Neo-Assyrian Empire, State Archives Assyria Studies, Vol. XI, Helsinki, 2000, p. 110f.

9 Տե՛ս Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie, Ed. M. P. Streck, 14/1–2, Berlin–Leipzig: Walter de Gruyter, 2014, S. 21–24; The Prosopography of the Neo-Assyrian Empire, **Vol. 3, Part II**, ed. by H. D. Baker, Helsinki, 2011, p. 1328ff.; **Millard A.**, The Eponyms of the Assyrian Empire 910–612 B.C., SAAS, Vol. II, Helsinki, 1994, p. 43; **Grayson A. K.**, Assyrian and Babylonian Chronicles, Texts from Cuneiform Sources, vol. VI,

բարձրացավ՝ «վերցրեց գահը», մ.թա. 745-ի Այյարու¹⁰ ամսի 13-ին, Արրապ-խայի կառավարիչ Նաբու-բելու-ուծուրի էպոնիմատի ժամանակ¹¹:

Գահին բազմելուց անմիջապես հետո Թուկուլտի-ասիլ-Էշարրա III-ի գլխավոր խնդիրն էր անընդմեջ պատերազմների արդյունքում դատարկված ու լքված տարածքների վերաբնակեցումը, երկրի տնտեսության և բանակի վերականգնումը: Միայն այս խնդիրների կարգավորման արդյունքում էր հնարավոր վերականգնել երկրի նախկին քաղաքական ու տնտեսական հզորությունը: Նրա եռանդուն գործունեության շնորհիվ, կառավարման հենց առաջին տարում կատարվեցին ռազմա-քաղաքական բարեփոխումներ¹², որոնց արդյունքում Ասորեստանը կարողացավ դուրս գալ քաղաքական այն քառսից, որում հայտնվել էր շուրջ կես դար առաջ: Վերադասավորելով ուժերը՝ Թուկուլտի-ասիլ-Էշարրա III-ը սկսեց ակտիվորեն զբաղվել Ասորեստանի միջազգային դիրքերի ամրապնդման խնդրով: Մերձավոր Արևելքում Ասորեստանի դիրքերը վերականգնելու համար Թուկուլտի-ասիլ-Էշարրա III-ը հաջող արշավներ կազմակերպեց աշխարհագրական բոլոր ուղղություններով: Առաջին հարվածն իրենց վրա վերցրեցին Ասորեստանի և Բաբելոնիայի սահմանային շրջաններում բնակվող արամեացիները, ապա նա շարժվեց դեպի Իրանական բարձրավանդակի հյուսիս արևմտյան հատվածը և նվաճեց Պարսուան և Բիթ-Խամբան, որոնք շուտով վերածվեցին ասսուրական նահանգների¹³: Վերջիններիս նկատմամբ տարած հաղթանակից հետո, Թուկուլտի-ասիլ-Էշարրա III-ը նրանց իր բանակի շարքերը ներգրավեց որպես հետևակայիններ¹⁴: Իսկ մեկ տարի անց՝ մ.թ.ա. 743-ին Թուկուլտի-ասիլ-Էշարրա III-ը Ասորիքում ջախջախեց Ուրարտուի և նրա դաշնակիցների զորքերին:

Ամեն մի ռազմական հաջողություն հնարավորություն էր ընձեռնում համարելու և քանակապես մեծացնելու ասսուրական բանակի թիվը: Ռազմական բարեփոխումներից հետո ասսուրական բանակը դարձավ առավել արհեստավարժ, զինվորական գործը փաստացի դառնում էր մասնագիտություն: Այս ամենն Ասորեստանին հնարավորություն ընձեռեց ունենալ կայուն և մշտական բանակ: Ըստ Բ. Օդետի՝ ասորեստանյան բանակում կադրային քաղաքականության մշտական տարրերից է եղել վասալական կախման մեջ գտնվող երկրներից զորակոչի ներհոսքը՝ որպես Ասորեստանին տրվող հարկի տեսակ, ինչպես նաև նվաճված երկրների բանակներում ծառայած և ապա տեղահանված տղամարդկանց զորակոչումը ասորես-

Locust Valley, New York, 1975, p. 248; **Brinkman J. A.**, A Political History of Post-Kassite Babylonia 1158-722 B.C., Roma, p. 240, n. 1544; **Ցակայանյան Ռ.**, Էթնոքաղաքական տեղաշարժերը ..., էջ 252:

10 Աքքադական օրացույցի երկրորդ ամիսը, համապատասխանում է ապրիլ-մայիս ամիսներին: Տե՛ս **Ցակայանյան Ռ.**, Էթնոքաղաքական տեղաշարժերը ..., էջ 275:

11 Տե՛ս **Tadmor H., Yamada Sh.**, The Royal Inscriptions of Tiglath-Pileser III (744-727 BC) and Shalmaneser V (726-722 BC), The Royal Inscriptions of Neo-Assyrian Period (այսուհետ՝ RINAP), Volume 1, Winona Lake: Eisenbrauns, 2011, N 16, l. 24; **Glassner J.-J.**, 2004, Mesopotamian Chronicles, Atlanta, 2004, p. 173; **Millard A.**, op. cit., pp. 59, 103; **Zawadzki S.**, The Revolt of 746 B.C. and the Coming of Tiglath-Pileser III to the Throne, SAAB, VIII/1, 1994, pp. 53-54.

12 Տե՛ս **Ցակայանյան Ռ.**, Ջանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը ..., էջ 46-49:

13 Տե՛ս **RINAP 1**, N 9, ll.12-13; **Cole S. W.**, Nippur in Late Assyrian Times c. 755-612 BC., SAAS, Vol. IV, Helsinki, 1996, p. 70f.; **Grayson A. K.**, Assyria: Tiglath-pileser III to Sargon II (744-705 B.C.), CAH, III/2, 1991, p. 80f.

14 Տե՛ս **Dezsó T.**, The Assyrian Army, I: The Structure of the Neo-Assyrian Army as Reconstructed from the Assyrian Palace Reliefs and Cuneiform Sources, I. Infantry, Budapest, 2012, p. 152f.

տանյան բանակ¹⁵:

Վարչական բարեփոխումների արդյունքում նվաճված տարածքների նկատմամբ իրականացվող քաղաքականությունն արմատական փոփոխության ենթարկվեց¹⁶: Այդ փոփոխությունից անմասն չէին մնալու նաև այն կոնկրետ տարածքների բնակիչները, որոնց նկատմամբ սկսվեց **našāhu**-ի քաղաքականության զանգվածային կիրառումը՝ քաղաքական և տնտեսական հենքով: Փաստացի Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ի առջև ծառայած խնդիրներից էր Ասորեստանը դարձնել իր նախադեպը չունեցող տնտեսապես հզոր կայսրություն, որտեղ կարծես թե չէին լինելու ընդգծված էթնիկական տարբերություններ և պետությունը հետագայում ընթանալու էր համահարթեցման ճանապարհով: Նա ոչ միայն նախաձեռնում էր վերաբնակեցումները, այլև պաշտոնապես խրախուսում էր սահմանափակ միգրացիաները պետության ներսում: Ասուրական էթնոքաղաքականության հիմնական նպատակն էր կայսրության տարածքում հոմոգեն հասարակության ստեղծումը մեկ ընդհանուր մշակույթով¹⁷:

Այս ամենը մեզ հիմք է տվել ենթադրելու մի այնպիսի ռազմական մեքենայի գոյության մասին, որը ակտիվ ռազմական գործողությունների հրահանգներ տալուց բացի, պետք է զբաղվեր նաև էթնիկ հարցերով: Գտնում ենք, որ այն կարող էր կենտրոնացած լինել «պալատական վարչությունում», որտեղից ղեկավարվում էր պետությունը՝ **rab ummāni**-ի միջոցով¹⁸ և իրականացվում էր «¹⁶**mušarkisu**»-ի գլխավորությամբ¹⁹: Ըստ երևույթին «rab ummāni»-ի գործակալությունը կարելի է համեմատել Մասանյան Իրանում և Մեծ Հայքում առկա «**hazārapati (hazāruff, hazārbed, հազարապետ)**» գործակալության հետ, և որն էլ ըստ երևույթին համապատասխանում էր հունական **χιλιάρχος**-ի գործակալությանը²⁰:

Լուրջ ուշադրություն էր դարձվում տեղահանվածների ճանապարհային խնդիրներին և նրանց սննդի ապահովմանը: Այն իրականացվում էր «¹⁶**qurbūtu**»²¹ տիտղոսը կրող պաշտոնյայի միջոցով: Ինչպես երևում է ասուրական բարձրաքանդակներից՝ վերաբնակեցվողները դեպի նոր բնակության վայրեր են ուղեկցվել ասսուրական զինվորների և օժանդակող զորքերի կողմից²²:

15 Տե՛ս **Oded B.**, op. cit., p. 50; **Dalley S.**, Foreign Chariotry and Cavalry in the Armies of Tiglath-Pileser III and Sargon II, Iraq, N 47, 1985, pp. 31–48.

16 Տե՛ս **Յականյան Ռ.**, Ջանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը ..., էջ 49:

17 Տե՛ս **Parpola S.**, National and Ethnic Identity in the Neo-Assyrian Empire and Assyria Identity in Post-Empire Times, Journal of Assyrian Academic Studies, vol. XVIII, N 2, 2004, pp. 7, 10f.

18 Տե՛ս **Յականյան Ռ.**, Էթնոքաղաքական տեղաշարժերը ..., էջ 21:

19 Տե՛ս **The Assyrian Dictionary** of the Oriental Institute of the University of Chicago, **Gelb I.J.**; **Oppenheim A.L.**, et. al. (ed.), Vol. 10, M2, 1977, p. 260f.; **Oded B.**, op. cit., p. 39; **Dezső T.**, The Assyrian Army, I: The Structure of the Neo-Assyrian Army as Reconstructed from the Assyrian Palace Reliefs and Cuneiform Sources, 2. Cavalry and Chariotry, Budapest, 2012, pp. 43f., 122ff.

20 Տե՛ս **Յականյան Ռ.**, Էթնոքաղաքական տեղաշարժերը ..., էջ 21:

21 Տե՛ս **The Assyrian Dictionary**..., Vol. 13, Q, 1982, p. 315 ff.

22 Տե՛ս **Oded B.**, op. cit., p. 39.

2. Տեղահանված և վերաբնակեցված բնակչության սոցիալական դրությունը

Նվաճված տարածքներից տեղահանված և Ասորեստանի տարբեր շրջաններում վերաբնակեցված բնակչության կարգավիճակը պետք է իրավական ձևակերպում ստանար: Ակնհայտորեն նրանց ստրուկներ չի կարելի անվանել: Իհարկե, Ասորեստանում կային ստրուկներ, բայց կարծում ենք դրանց թիվը բավականին փոքրաթիվ է եղել, իսկ վերաբնակեցվողները, ինչպես կհամոզվենք հետագայում՝ չնայած այն հանգամանքին, որ նրանք հաստատվում էին արքայական, տաճարային և նույնիսկ մասնավոր անձանց հողատարածքներում և ըստ Ի. Մ. Դյակոնովի՝ համարվում էին **warduša šarrim**՝ արքայական ստրուկներ²³, սակայն մեծ մասը անձնապես ազատ էր և ակնհայտորեն ստրկության չէր տարված: Նրանք իրավական տեսանկյունից հավասարվում էին «Ասորեստանի մարդկանց»՝ **niše mat Aššur** կամ «երկրի մարդկանց»՝ **niše māti** հետ՝ «**it-ti UN.MEŠ (niše) KUR.Aš-šur am-nu-šu-nu-ti**» («ես նրանց համարեցի որպես Ասորեստանի մարդիկ»²⁴): Ուստի նրանք փաստացի համարվում էին Ասորեստանի ազատ քաղաքացի՝ **awilum**, սակայն սկզբունքորեն տարբերվում էին բնիկ աշուրացիներից՝ **mar'e mat Aššur**՝ «Ասորեստանի զավակներից»²⁵: Նրանք կարող էին շարժական և անշարժ գույք ունենալ, զինվորագրվել աստուրական բանակում, վարել ինքնուրույն տնտեսություն և նույնիսկ սեփական ծառաներ պահել²⁶:

Վերոշարադրյալը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ **տարածաշրջանային տերության** առաջացմանը զուգահեռ, զանգվածային տեղահանությունների ու վերաբնակեցումների քաղաքականության կիրառումը որպես պետության քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ իրենից մի տեսակ էթնիկական ձուլում՝ **assyrianization** էր ներկայացնում²⁷, այսինքն՝ աստուրական կայսրության տարածքում բնակվող յուրաքանչյուր բնակիչ առանց էթնիկական խտրականության համարվել է **«ասորեստանցի»**: Վերջին առումով Ս. Պարպոլան նշում է, որ չնայած Ասորեստանի էթնիկական բազմազանությանը՝ այն եղել է համաչափ համակարգված քաղաքական կազմակերպություն, հստակեցված և լավ վերահսկվող ու պահպանվող սահմաններով՝ համարվելով որպես մեկ ամբողջություն՝ **«Աշուրի երկիր»**, որը աստուրական արքաները ձգտում էին ընդլայնել: Արտաքին աշխարհում տերությունը պետք է հանդես գար որպես միասնական, միաձույլ ամբողջություն, որի բնակիչները, առանց վարանելու և անկախ իրենց էթնիկ ծագումից՝ համարվում էին ասորեստանցիներ²⁸: Քիչ այլ է Բ. Օդետի մոտեցումը. նա նշում է, որ ասորեստանցիները հաղթող էին, տիրակալ, իսկ մնացած ազգերը պետք է ենթարկվեին նրանց, ցանկացած փորձ թոթափե-

23 Տե՛ս **Diakonoff I. M.**, *The Cities of the Medes*, M. Cogan, I. Eph'al (eds.), *Ah, Assyria, Studies in Assyrian History and Ancient Near Eastern Historiography Presented to Hayim Tadmor*, Scripta Hierosolymitana, XXXIII, Jerusalem, 1991, p. 19.

24 **RINAP 1**, N 5, l. 4; N 6, l. 4; Շարրու-կին (Սարգոն) II-ից (մ.թ.ա. 722-705 թթ.) հետո արտահայտությունը դադարում է կիրառվել: Արտահայտության մանրամասն քննարկումը տե՛ս **Oded B.**, *op. cit.*, pp. 81-91; **Parpola S.**, *op. cit.*, p. 13 n. 38.

25 **Parpola S.**, *op. cit.*, p. 13 n. 37.

26 Տե՛ս **Oded B.**, *op. cit.*, pp. 75-115.

27 Տե՛ս **Յակոնյան Ռ.**, էթնոքաղաքական տեղաշարժերը ..., էջ 23:

28 Տե՛ս **Parpola S.**, *op. cit.*, p.5f.

լու Ասորեստանի լուծը դատապարտված էր անհաջողության: Ոչ մի երկիր հավասար չէր Ասորեստանին, և ցանկացած պայմանագիր վասալական պայմանագիր էր²⁹:

Այս ամենը ոչ միայն քաղաքականապես բավականաչափ թուլացնում էր նվաճված տարածաշրջանները և նվազեցնում հետագա ընթացողության հավանականությունը, այլև ասորեստանցիներին տալիս էր ընդարձակ տարածքներ, որոնք կարող էին շնորհվել բարձրատոհմիկներին, նահանգապետներին, զինվորականներին՝ դրանով հանդերձ ստեղծելով բավականին արդյունավետ վարչական կազմակերպություն³⁰: Քաղաքական առումով տեղահանությունների գլխավոր նպատակներից էր նաև Ասորեստանի սահմանամերձ շրջաններում վերաբնակեցվող նոր բնակիչներով ստեղծել պետության համար կայուն պատվար: Արքան նրանց հողատարածքներ էր հատկացնում և ապահովում կենցաղային որոշ հարցերում³¹:

3. Սոցիալական կազմը

Հակառակորդների նկատմամբ բռնությունները, թալանն ու ավերումները, զանգվածային տեղահանություններն ու վերաբնակեցումները՝ պատերազմների համատեքստում, միահյուսվում էին աստուրական արքաների բարի կամքի հետ: Ինչպես վկայում են փաստերը, ասորեստանցիները ձգտում էին տեղահանություններին տալ ոչ թե պատժիչ բնույթ, այլ դրանք դիտարկել որպես ազատ կամքի արտահայտություն: Տեղահանությունները կատարվում էին ոչ թե կամայականորեն, այլ հատուկ մշակված ծրագրով՝ ընտրովի կարգով և հատուկ նպատակներով: Ամենայն հավանականությամբ նախօրոք որոշվում էր, թե ինչպիսի սոցիալական խմբերի և արհեստի տեր մարդկանց պետք է տեղահանելին: Այս ցանկում առաջնակարգ տեղ ունեին քաղաքային վերնախավը, գիտնականները, արհեստագործ վարպետները և այլն:

Վերոշարադրյալը մեզ հիմք է տալիս կարծելու, որ ասորեստանյան արքաները ձգտում էին առավելագույն չափով օգտագործել նվաճված տարածքների մտավոր և ֆիզիկական ներուժը: Այս ամենն ուղղված էր պետության քաղաքական կառուցակարգի, տնտեսական և մշակութային կայունության ապահովմանը: Դեռ ավելին, պետության տնտեսական աճն ապահովելու համար անհրաժեշտ էր նաև հատուկ քաղաքականություն, ըստ որի ոչ միայն կրնակեցվեին պետության ծայրագավառային բնակավայրերը, այլև կիլիմեդները, կբարելավվեին տնտեսական կապերը ծայրագավառների և կենտրոնի միջև:

Չնայած այն հանգամանքին, որ զանգվածային տեղահանություններն ու վերաբնակեցումներն ունեին քաղաքական ու տնտեսական մեծ նշանակություն, և աստուրական արքաներն ամեն կերպ ձգտում էին վերաբնակեցվողների հետագա ճակատագիրը կապել նոր բնակավայրի հետ, այն մեծ մասամբ չտվեց սպասվող արդյունքը և մասնավորապես արամեացիների ու հրեաների առումով դա կարելի է անգամ ձախողված համարել: Փաստացի փոխելով տվյալ տարածքի էթնիկական պատկերը՝ զանգվածա-

29 Säu **Oded B.**, op. cit., p. 89.

30 Idem., p. 43.

31 Idem., p. 46.

յին վերաբնակեցումների արդյունքում տեղի էր ունենում մեկ այլ բնակավայրի էթնիկական պատկերի փոփոխություն: Մասնավորապես՝ նոր հիմնվող բնակավայրերում մեծամասնություն պետք է կազմեին վերաբնակեցվողները: Ակնհայտ էր դառնում նաև օտար մշակույթի առկայությունը՝ ասսուրական հոգևոր ու նյութական տիրույթներում՝ կրոնում, ծիսական արարողակարգերում, լեզվում, ավանդույթներում, ճարտարապետությունում, բարձրաքանդակներում³² և այլն:

Նոր բնակավայրերում և առավել ևս արքայական ոստանի խոշոր քաղաքների շրջակայքում վերաբնակեցվողները ամրացվում էին հողին, ինչը մի տեսակ զսպիչ գործոնի դեր պետք է խաղար օր օրի հզորացող ասսուրական ռազմական վերնախավի ձգտումների նկատմամբ: Ըստ Բ. Օդետի՝ տեղահանվածների այս զանգվածն ամենավտանգավորն էր: Նրանք ասսուրական արքայի լոյալության դիմաց ստանում էին ինքնավարություններ, որն էլ աստիճանաբար առաջացնում էր ասսուրական հասարակության դժգոհությունը: Վերաբնակեցված բնակչությունը լոյալ էր մնում պետությանը: Վերջինիս դեմ պայքարից նա գրեթե ոչ մի շահ չուներ, բացառությամբ այն հույսից, որ մի օր հետ են վերադառնալու իրենց հայրենիք³³: Վերաբնակեցվողներից ոմանց անգամ վիճակված է եղել վեր բարձրանալ ասսուրական աստիճանավորների սանդուղքով և ձեռք բերել իշխանական լծակներ, ինչպես նաև տեղական ու վարչական պաշտոններ զբաղեցնել³⁴: Հայտնի են, օրինակ, Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ի ժամանակ Մարաստանում իսրայելցիների պետական պաշտոններ զբաղեցնելու դեպքերը³⁵:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ասորեստանցիները հիմնականում նախընտրում էին տեղահանություններն ու վերաբնակեցումները կատարել վերաբնակեցվողների ընտանիքներով հանդերձ: Այս առումով Բ. Օդետը նշում է, որ ընտանիքի պարագայում վերաբնակեցված մարդիկ չէին ձգտի փախչել, իսկ ասսուրական բանակում ծառայողները ստիպված կլինեն անվերապահորեն ենթարկվել ասսուրական հրամանատարությանը: Բացի այդ՝ ընտանիքներով մարդիկ ավելի արագ կհարմարվեին նոր միջավայրին և ստիպված կլինեին լավ աշխատել, որպեսզի կերակրեն ու ապահովեն նրանց բարեկեցությունը: Անհրաժեշտ էր, որ նրանք լինեին իրենց հարազատ հասարակական և մշակութային միջավայրում³⁶: Նույնիսկ երիտասարդ տղամարդկանց ու կանանց համար ձգտում էին համապատասխան զույգեր գտնել: Ամուսնացնելով տեղաբնիկների կամ այլ վայրերից վերաբնակեցվածների հետ և, ամենայն հավանականությամբ, նրանց ամրացնելով հողին՝ ասսուրական արքաները փորձում էին խառնամուսնության միջոցով վերաբնակեցվողներին կտրել մայր հողից: Վերոշարադրյալն իր հաստատումն է գտնում մի նամակ-գեկուցագրում, որտեղ Աշշուր-մատկա-տերան արքային տեղեկացնում է, որ արամեացի երիտասարդների համար կին փնտրելու գործում խնդիրներ են ծագել: Նա արքայից գումար է խնդրում,

32 Տե՛ս **Oded B.**, op. cit., p. 55.

33 Տե՛ս **Oded B.**, op. cit., p. 89.

34 Տե՛ս **Ponchia S.**, Administrators and Administrated in Neo-Assyrian Times, in: Organization, Representation, and Symbols of Power in the Ancient Near East Proceedings of the 54th Rencontre Assyriologique Internationale at Würzburg 20–25 July 2008, ed. by **G. Wilhelm**, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2012, pp. 213–224.

35 Տե՛ս **Galil G.**, Israelite Exiles in Media: A New Look at ND 2443, *Vetus Testamentum*, N 59, 2009, pp. 71–79.

36 Տե՛ս **Oded B.**, op. cit., p. 24.

որպեսզի նրանք կարողանան ամուսնանալ³⁷: Իսկ Սամալայի/Յուադդիի արքա Պանամուվա II-ն³⁸ իր արամերեն արձանագրության մեջ նշում է, որ Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ը «արևելքի դուստրերին բերեց արևմուտք և արևմուտքի դուստրերին տարավ արևելք»³⁹ և այլն:

Իր մեկ այլ նամակ-զեկուցագրում Աշշուր-մատկա-տերան արքային տեղեկացնում է, որ տեղահանված արամեացի ռազմիկների համար, որոնք պատրաստվում էին ասսուրական բանակի հետ արշավի ելնել՝ նախատեսված անհրաժեշտ նյութական բոլոր պարագաներն առկա են, բացառությամբ ավանակներից, որոնց ձեռքբերումից հետո, նույնպես կուղարկի⁴⁰:

4. Քաղաքների դերն ու նշանակությունը:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ն Ասորեստանում առաջինն էր, որ զանգվածային տեղահանությունների և վերաբնակեցումների քաղաքականությունը դարձրեց պետության արտաքին, ինչպես նաև տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը⁴¹: Վերաբնակեցվողների համար ասորեստանյան արքաները կառուցում և վերակառուցում էին քաղաքներ: Այս ամենը մեզ հասանելի է ոչ միայն Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ի արձանագրություններից, այլև բավականին լավ կերպով հաստատագրվում է հնագիտական պեղումների արդյունքներով⁴²: Չնայած որ զանգվածային տեղահանություններն ու վերաբնակեցումները ունեին լուրջ քաղաքական ուղղվածություն, այնուամենայնիվ նրանց հենքը տնտեսական էր, և Ասորեստանին առաջին հերթին անհրաժեշտ էր երկիրը հզորացնել տնտեսապես:

Ի տարբերություն իր նախորդների, Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ը սկսում է հազվադեպ կիրառել քաղաքների ավերման մեթոդը, որը հիմնականում փոխարինվում է զանգվածային տեղահանություններով ու վերաբնակեցումներով, իսկ վերջիններս էլ իրենց հերթին ունեին քաղաքական և տնտեսական մեծ նշանակություն⁴³: Նվաճված ու ավերված քաղաքները վերականգնվում էին, կառուցվում էին նորերը: Նվաճված քաղաքների նկատմամբ վարվող քաղաքականության մի շարք մեթոդներից կարելի է առանձնացնել այն մոտեցումները, որոնք կիրառվում էին այս կամ այն քաղաքի բնակչության նկատմամբ:

Ա) Նվաճված տարածքներում ամրապնդվելու համար ասսուրական արքաները ձգտում էին դրանք կցել Ասորեստանին կամ գցել իրենց ազդեցության տակ, այս իսկ պատճառով նրանց համար մեծ նշանակություն էին ստանում նվաճված տարածքների քաղաքներն ու ամրոցները, որոնք պետք

37 Տե՛ս **Saggs H. W. F.**, *The Nimrud Letters, 1952, Cuneiform Texts from Nimrud V, Wiltshire, 2001, ND 2725; Luukko M., *The Correspondence of Tiglath-pileser III and Sargon II from Calah/Nimrud, States Archives of Assyria*, vol. XIX, Helsinki, 2012, N 18.*

38 Տե՛ս **Lipiński E.**, *The Arameans: their Ancient History, Culture, Religion*, Sterling, 2000, p. 243 ff.

39 **Oded B.**, op. cit., p. 27.

40 Տե՛ս **Saggs H. W. F.**, op. cit., ND 2643; **Luukko M.**, op. cit., N 17.

41 Տե՛ս **Oded B.**, op. cit., p. 33; **Ցակախյան Ռ.**, *Զանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը ...*, էջ 48:

42 Տե՛ս **Parker B. J.**, *Archaeological Manifestations of Empire: Assyria's Imprint on Southeastern Anatolia*, *AJA*, N 107/4, 2003, pp. 525-557.

43 **Oded B.**, op. cit., p. 63.

է վերածվելին ռազմաստրատեգիական կարևոր հենակետերի: Ելնելով այս կամ այն տնտեսական ու քաղաքական նկատառումներից՝ որոշ քաղաքներին անգամ ինքնավարություն էր շնորհվում:

Ինքնավարություն ստացած քաղաքները հավատարմության երդում էին տալիս Ասորեստանի արքային և պարտավորվում կանոնավոր հարկեր վճարել⁴⁴, հակառակ պարագայում արքան սպառնում էր տեղահանել նրա բնակչությանը⁴⁵: Տյուրոսի արքա Խիրամ II-ը ընդունում է ասսուրական գերիշխանությունը և մնում գահին⁴⁶, սակայն քիչ անց մենք Տյուրոսի գահին տեսնում ենք Մետաննա/Մատան II-ին⁴⁷: Տյուրոսն ընդունեց ասսուրական գերիշխանությունը՝ միաժամանակ պահպանելով ինքնավարությունը: Պատճառներն այստեղ երկակի բնույթ էին կրում. ըստ երևույթին ասորեստանցիները հնարավորություն չունեին քաղաքը նվաճել, կամ այն երկար ժամանակ պաշարման տակ պահել և ամենակարևորը՝ Տյուրոսը հետագայում կարող էր հանդիսանալ որպես ծովային առևտրի հիմնալի միջնորդ: Ամենայն հավանականությամբ սրանք էին այն պատճառները, որ Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ն ինքնավարություն շնորհեց քաղաքին⁴⁸: Նմանատիպ մի օրինակ կարող է լինել նաև Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ի և Բիթ-Կապսիի երկրի տիրակալ Բատանուի միջև ձեռք բերված հնարավոր պայմանավորվածությունը⁴⁹:

Բ) Որոշ դեպքերում էլ տեղական արքան և արքայատոհմը փոխարինվում էր այլ արքայով կամ ասորեստանյան կառավարչով⁵⁰: Օրինակ՝ Բիթ-Խունրիի (Իսրայել) արքա Պեքան դավադրության զոհ գնաց ամենայն հավանականությամբ՝ ասսուրական միջամտությամբ և նրա փոխարեն Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ը գահ բարձրացրեց Հոսիային⁵¹: Աշկալոնում, ակնհայտորեն նույնպես ասորեստանյան միջամտությամբ՝ գահընկեց արվեց Մետինտին և գահ բարձացվեց Ռուկիբտը⁵²: Գազայի արքա Խանունուն թողնվեց գահին այն դեպքում, երբ նրա ամբողջ ընտանիքը տեղահանվեց⁵³: Գազայում ամենայն հավանականությամբ ստեղծվեց ասսուրական առևտրական կենտրոն, որով հանդերձ հնարավորություն ունեցան վերահսկելու ամբողջ տարածաշրջանի առևտրական ուղիները: Գազայի նվաճման առումով Ս. Հոլլըվեյը նշում է, որ Եգիպտոսի հետ միակողմանի տնտեսական

44 Տե՛ս **Cogan M.**, *Imperialism and Religion: Assyria, Judah and Israel in the Eighth and Seventh Centuries B.C.E.*, Society of Biblical Literature and Scholars Press 19, Missoula, Montana, 1974: p. 44ff.; հմնմ. **Քոսյան Ա.**, Տուն Թորգոնայ (առասպել և իրականություն), Եր., էջ 14-15:

45 Տե՛ս **Parpola S., Watanabe K.**, *Neo-Assyrian Treaties and Loyalty Oaths*, SAA, vol. II, Helsinki, 1988, N 1 (Շամշի-Ադադ V-ի և Բաբելոնիայի արքա Մարդուկ-գաբիլ-շումի I-ի միջև), N 2 (Աշշուր-նիրարի V-ի և Բիթ-Ագուսիի տիրակալ Մատիիլուի միջև՝ **Lipiński E.**, op. cit., p. 216f.):

46 Տե՛ս **RINAP I**, N 47, rev. 6-13; **Na'aman N.**, *Tiglath-pileser III's Campaigns against Tyre and Israel (734-732 B.C.)*, Tel Aviv, N 22, 1995, pp. 268-278; **Culican W.**, *Phoenicia and Phoenician Colonization*, CAH, III/2, 1991, p. 468f.

47 Տե՛ս **RINAP I**, N 47, rev. 16; **Culican W.**, op. cit., p. 469.

48 Տե՛ս **Weippert M.**, *Zur Syrienpolitik Tiglathpileasers III*, in H. J. Nissen and J. Renger (eds.), *Mesopotamien und seine Nachbarn*, NXXV, 1982, S. 399.

49 Տե՛ս **RINAP I**, N 7, ll. 10- 12.

50 Տե՛ս **Քոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 14:

51 Տե՛ս **RINAP I**, N 42, ll. 15-19; **Dubovský P.**, *Tiglath-pileser III's Campaigns in 734-732 B.C.: Historical Background of Isa 7; 2 Kgs 15-16 and 2 Chr 27-28*, *Biblica*, N 87, 2006, pp. 153-170; **Mitchell T. C.**, *Israel and Judah from the Coming of Assyrian Domination until the Fall of Samaria, and the Struggle for Independence in Judah (c. 750-700 B.C.)*, CAH, III/2, 1991, p. 335.

52 Տե՛ս **RINAP I**, N 21, ll. 12-16, N 22, ll. 8-13; **Mitchell T. C.**, op. cit., p. 334; **Weippert M.**, op. cit., p. 397f.

53 Տե՛ս **RINAP I**, N 48, ll. 14-16; **Uehlinger C.**, *Hanun von Gaza und seine Gottheiten auf Orthostatenreliefs Tiglathpileasers III*, in U. Hübner and E. A. Knauf (eds.), *Kein Land für sich allein: Studien zum Kulturkontakt in Kanaan, Israel/Palästina und Ebirnäri für Manfred Weippert zum 65. Geburtstag* (Orbis Biblicus et Orientalis 186), 2002, pp. 92-125.

հարաբերությունների դուռն արդեն ամուր փակված էր⁵⁴:

Որպես կանոն՝ առևտրական խաչմերուկներում գտնվող քաղաքների բնակչությանը գրեթե միշտ տեղահանում էին և վերաբնակեցնում՝ փոխարինելով Ասորեստանի արքային լոյալ բնակչությամբ, որը հնարավորություն էր տալիս ոչ միայն վերահսկողություն հաստատել առևտրական այդ ճանապարհների նկատմամբ, այլև ընդարձակել Ասորեստանի առևտրական արեալը: Եվ պատահական չէ նաև, որ Թուկուլտի-ապիլ-Էշարրա III-ը բավականին մեծ ուշադրություն էր դարձնում Արևելյան Միջերկրականի երկրներին:

